

Վազգեն Ա. Հաստատ կը Մնայ

ԹՈՐՈՆԹՈՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱԳԻՆԱՊԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԱՌՆՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՖԼԱՇԻՆԿ, Ն.Ե.- Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը հաստատ կը մնայ Թորոնթոյի և կեղցական տագնապի եւ քանատական նոր թեմ մը ստեղծելու կապակցութեամբ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կողմէ առնուած որոշումներուն վրայ:

Վեհափառը, անյողգողդ կը մնայ այս որոշումներու գործագրութեան կապակցութեամբ՝ հակառակ կատարուած դիմումներուն եւ խնդրանքներուն:

Գերշ. Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան, Առաջնորդը Ամերիկայի Ագեւելեան թեմին, նախ քան Վեհափառ Հայրապետին Փարիզէն մեկնումը, թեմական Խորհուրդի ատենապետ դատաւոր ձան Նաճարեանի եւ թեմական Խորհուրդի անդամ Հոգչ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեանի ընկերակցութեամբ, Փարիզ մեկնած էր Վեհափառ Հայրապետին հետ Թորոնթոյի հարցին շուրջ խորհրդակցելու եւ խնդրելու անկէ որ առաջին առիթով Գերշ. Տ. Արքս Ս. Շիրվանեանը հեռացնէ Թորոնթո-

յէն՝ այդ քաղաքին մէջ «օրինականութիւնը» վերահաստատելու եւ երկրորդ՝ ջնջէ 6 ամսը-ւան այն պայմանաժամը, զոր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գրած էր Քանատայի մէջ նոր թեմ մը հաստատելու կապակցութեամբ: Ինչպէս ծանօթ է, Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Մարտ ամպուան վեր-ջերը, Գեր. Արքս Սրբազանի գլխաւորած երեք հոգինոց պատուիրակութեան ներկայացուցած էր պաշտօնական գիր մը, որուն մէջ յատակ կերպով կը նկարագրէր այն քայլերը, որոնք պէտք է առնուէին Քանատայի մէջ նոր

Նարունակելի էջ 13

Վազգեն Ա. Հաստատ կը Մնայ

ԹՈՐՈՆԹՈՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱԳԻՆԱՊԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԱՌՆՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Նարունակուած էջ 1-էն

թեմ մը ստեղծելու համար: Պաշտօնական այդ գիրը կը չեշտէր թէ ամենաուշը մինչեւ 6 ամիս Քանատան նոր թեմ մը պիտի դատնար եւ Մայր Աթոռը պիտի չհանդուրժէր որ նորանոր ձգգումներ ըլլային Ամերիկահայոց Առաջնորդագրանի կողմէ: Կաւելցուէր նաեւ որ մինչեւ 6 ամիս հարցերը դատաւորուած պիտի ըլլային այնպիսի ձեւով որ Հայրապետական յատուկ կոնգակով Քանատան նոր թեմ պիտի հոչակուէր:

Նախ քան Թորգոմ Սրբազանի գլխաւորած պատուիրակութեան Փարիզ այցելութիւնը, քանատահայ չորս ուրիշ անձնաւորութիւններ, բոլորն ալ պաշտպանող նիւ Եռոքի Առաջնորդարանի գիրքը Թորոնթոյի հարցին կապակցութեամբ, այցելած էին Փարիզ գարձեալ Արքս Սրբազանի ու անոր կողմնակիցներուն գէմ Վեհափառ Հայրապետին խնդրանք ներկայացնելու համար:

Արքս Սրբազանի համախուները ընդհանրագէս այն համոզումը ունին որ նիւ Եռոքի Առաջնորդարանը պիտի շարունակէ ամէն գնուով ձգձել Քանատայի մէջ նոր թեմ մը ստեղծելու որոշումը այն վախով որ նոր թեմի

անմիջական ստեղծումով Արքս Սրբազան շատ դիւրութեամբ կրնայ Առաջնորդ ընտրուիլ քանի որ ան կը վայելէ մէծ ժողովրդականութիւն եւ ձեւով մը Վեհափառին համար յարմարագոյն կղերականն է այդ պաշտօնին համար: * Յետոյ համախուները գարձեալ կը չեշտէն որ Թորոնթոյի հարցը այժմ վերածած է Առաջնորդ Սրբազան Հօր եւ Արքս Սրբազանի մինչեւ անհատական վէճի մը: Նոյն անձները կատարէին նաեւ որ Առաջնորդարանը, հակառակ Մայր Աթոռի հրահանգին, տակաւին ոչ մէկ քայլ առած է Ս. Խաչ անկախ եկեղեցին առնելու իր հովանաւորութեան ներքեւ ու նշանակելու հովիւ մը՝ այդ եկեղեցիին:

Արքս Սրբազան, մինչ այդ, հրափրուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ կը սպասուի որ անմիջական պիտի կարգի զնէ իր անձնական գործերը, մեկնի:

* Անոնի՞ կը յայտնին թէ Արքս Սրբազանի թնտրութեան հաւանականութիւնը կը նուազի երբ նոր թնտրութիւնները տեղի ունենան յապահումով եւ երբ Սրբազանը արդէն հեռացած բլլայ Թորոնթոյին: